

ՍԵՍՐՈՊԵԱՆ ԳՐԵՐԸ ԵՒ ՀԱՅԵՐԷՆԻ ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

2. Միրզաբեկեան

Քրիստոնէութիւնը որպէս պետական կրօն հռչակելու հայոց որոշումը ազդարարում էր քաղաքակրթութեան եւ գիտական մտքի նոր վերելքը:

Սուրբ գրքի դրոյթները Հայաստանում պիտի քարոզուէին հայոց լեզուով եւ գրուէին սեփական գրերով: Սակայն գրերը տակաւին գոյութիւն չունէին:

Մենք մերժում ենք այն թիւր մտայնութիւնը, ըստ որի Աստուածաշունչը ունկնդիրներին ներկայացում էր սկզբում միայն յունարէն կամ ասորերէն:

Հայոց առաջին կաթողիկոս Գրիգոր Լուսաւորիչը փայլուն կրթութիւն էր ստացել եւ տիրապետում էր հայերէնին, յունարէնին, պարսկերէնին, ասորերէնին: Նա եւ նրան յետեւող հոգեւոր հայրերը եթէ Սուրբ գիրքը կարդում էին յունարէնով, ամենեւին էլ չի նշանակում, թէ իրենց ունկնդիրներին, որոնք չգիտէին յունարէն, այդ լեզուով էին մատուցում Սուրբ գրքի դրոյթները:

Այս խնդրի վերաբերեալ ցայսօր էլ կա թիւր կարծիք, եւ դպրոցական դասագրքերում սովորողներին մատուցում են այն սխալ դրոյթը, ըստ որի հարիւր տարի ժողովուրդը չէր հասկանում ու չէր ըմբռնում ոչինչ, մինչեւ որ չստեղծուեցին մեսրոպեան գրերը, եւ Աստուածաշունչը չքարգմանուեց հայերէն:

Սա գիտական լուրջ խնդիր է, եւ որին մենք ապագայում կանդրադառնանք:

Հայոց հանճարը պիտի երկնէր սեփական գիրը, որպէսզի աւելի ամրապնդէր ժողովրդի միասնականութիւնը: Սակայն դրա համար հարկաւոր եղաւ ուղիղ հարիւր տարի, մինչեւ հայոց գրերը լեզուահնչիւնական կատարեալ համապատասխանութեամբ եւ ճշտութեամբ ստեղծեց հայ ժողովրդի հանճարեղ զաւակ Մեսրոպ Մաշտոցը: Այստեղից էլ բխում է մեր ուղղագրութեան պատմական եւ աւանդական լինելը: Իսկ պատմականը եւ աւանդականը իշխում է, որովյետեւ հնչիւնական ուղղագրութեան տուեալ ժամանակի համակարգի փոփոխութեան դէպքում հանդես են գալիս բազմաթիւ արգելակող պարագաներ (Յ. Լ. 1980, էջ 169):

Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց 36 գիր: Իսկ վաղ միջնադարում հայ մեծանուն քերականագէտներ Դաւիթ Անյաղքը, Մովսէս Քերթոզը, Ստեփանոս Սիւնեցին, Անանուհը, Համամ Արեւելցին, Գրիգոր Պահլաւունին, Մագիստրոսը, Յովհաննէս Երզնկացին, Եսայի Նչեցին, Իսկ աւելի ուշ Նաեւ Մխիթարեան հայրերը վերջնականապէս մշակեցին հայոց համազգային մաշտոցեան համակարգուած միասնական եւ միակերպ ուղղագրութիւնը՝ աւելացնելով օ եւ ֆ գրերը:

«Հայ ժողովրդի հանճարեղ զաւակ Մեսրոպ Մաշտոցը ոչ միայն Հայոց լեզուի գրահամակարգի գիտարարն էր, Հայ մատենագրութեան հիմնադիրը, այլեւ վաւերականօրէն հաւաստուած առաջին հնչիւնաբան լեզուաբան քերականագէտն էր, ուղղախօսութեան եւ ուղղագրական կանոնների ձեւակերպողը եւ Հայ դպրութեան Առաջին Սեծ ուսուցիչ մանկավարժը» (Լ. Խ. էջ 19):

1892 թ. սկսած հայագէտ Մ. Արեղեանը մոլորութիւն ունեցաւ կարծելու, թէ կարող է դափնին խլել Մաշտոցից, բայց չիմացաւ, որ ի վերուստ տրուածը ոչ ոք չի կարող խլել տիրոջից: Նա ուղիղ երեսուն տարի բազում դռներ զարկեց եւ մնաց անպատասխան, մինչեւ վրայ հասաւ չարաբաստիկ 1922 թականը:

Հայերէնի ուղղագրութիւնը ուսուցանում են 4-րդ դասարանում, ընդամենը մէկ ուսումնական տարուա մէկ քառորդում:

Հայերէնի ուղղագրութեան վերականգնման հակառակորդները ամենուրեք թմբկահարում են, թէ՛ հարա՛, հասէ՛ք, մեսրոպեան ուղղագրութեան վերականգնունով անգրագէտ կդառնայ մեր ժողովուրդը:

Հարց է առաջանում, ո՞ր ժողովուրդը, Սփիւռքում ապրող եւ մինչեւ այսօր աչքի լոյսի պէս պահող 8 միլիոնից աւել ժողովուրդը, թէ՛ Հայաստանում ապրող դրա կեսից էլ պակաս հայերը, որոնց անօրինական մի «դեկրետ»-ով պարտադրուել է խայտառակ այս խեղագրութիւնը:

Աբեղեանական այս խեղագրությունը կատարելուց ազգային լեզուի բնականոն ընթացքը խեղաբիրելով բազմաթիվ բառերի գրելաձևերը: (բերվում են օրինակներ):

Մեսրոպեան գրերը հայոց պատմության մեջ որքան մշակութային, պատմական, նույնքան, գուցե ևս ավելի, ունեն բաղաբանական նշանակություն:

Վաղուց ստուգաբանուած-հաստատուած է, որ մեսրոպեան գրերն ստեղծուել են ժամանակի ուղղախօսութեան հիմքի վրայ:

Լեզուբանութեան մեջ ինչպիսի տրամիներով ու հասկացութիւններով էլ որ մեկնաբանուեն այդ հակասութիւնները, այսօր Յայաստանի դպրոցներում հայերէնի ուղղագրութեան ուսուցման մեթոդաբանութիւնը միակողմանի է, ուստի արդիւնաւետութեան առումով ոչ լիարժէք: Այն խարսխուած է որոշակի կանոնների մեխանիկական մտապահման վրայ, որը ենթակայ է շուտափոխ մոռացման:

Պատահական չէր, որ այդ վայրագ իրողութեան դէմ իրենց ձայնը բարձրացրին բոլոր մեծանուն հայագետներն ու գրողները: Հայ լեզուաբանութեան հսկան Հր. Աճառեանը, երբեք չընդունեց արեղեանական խեղագրութիւնը:

Ամենայն հայոց բանաստեղծ Յովի. Թումանեանը 1922 թ. մայիսի 17-ին Յայաստանի լուսժողովոմին գրում է. «Ես որպէս հայ գրող եւ հայ գրողների Միութեան նախագահը՝ գալիս եմ յայտնելու իմ զարմանքը եւ բողոքելու էմ վարմունքի դէմ, որ ունեցել է Յայաստանի լուսժողովոմը եւ կարելուր խնդրում: Պ. Մ. Աբեղեանը մի առաջարկ է արել ու դրել հրապարակ: Շատ լաւ: Բայց Յայաստանի լուսժողովոմը որտեղից է իմացել, թէ եւ Աբեղեանը եւ ինքը՝ լուսժողովոմն էլ նրա հետ միասին անսխալական են, որ առանց քննութեան ենթարկելու առաջարկը, հրամանագրում է ընդունել եւ միայն դրանով գրել ու տպագրել: Պ. Աբեղեանի առաջարկը ընդունելի է, թէ չէ, դա դեռ քննելիք խնդիր է, յետևաբար լուսժողովոմի հրամանը անընդունելի է: Եւ եթէ էպէս է, ապա նրան, լուսժողովոմին մնում է ուղղել իր արած սխալը, յետ վերցնել իր արած կարգադրութիւնը, խնդիրը համարել բաց եւ դնել քննութեան»: (Հ. Թ. 1959 թ. հ. 5-6, էջ 320):

Մեծ բաւանտեղծի պատգամը դեռ չի կատարուած: Մնում է, որ ՀՀ նախագահը անսա այդ տարբեր մարդու պատգամին եւ ուժը կորցրած համարի հայերէնի ուղղագրութեան վերաբերեալ հրապարակուած այդ տխրահռչակ «դեկրետը»:

ՀԱՅԵՐԵՆ ՍԵՔՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԻՍԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հ. Պետրոսյան

Հայերեն մեքենագիտական տերմինների իմաստաբանական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց մի սովորական զանգված ստեղծվում (կամ բարգձանվում) է լեզվի բառապաշարի մեջ եղած արմատներով ու բառերով, այսինքն՝ բառապաշարի կատարելագործման ճանապարհով: «Բառապաշարի կատարելագործումը տվյալ լեզվի բառային կազմի ներքին զարգացումն է, որն ուղղված է լեզվի մեջ գոյություն ունեցող բառերի իմաստաբանական, գործառնական, ձևական-ձևարանական և բառակազմական հատկանիշների արդիականացմանը՝ լեզվի մեջ գործող զարգացման ներքին (ներլեզվական) օրինաչափություններին համապատասխան և արտաքին (արտալեզվական) գործոնների թելադրանքով»:

Բառապաշարի կատարելագործումն առհասարակ ընթանում է մի քանի ուղղություններով՝ բառիմաստի տերմինացում և հակառակը՝ տերմինների չեզոքացում, բառերի հնացում և հակառակը՝ ոչ գործուն բառերի գործունացում, ժողովրդախոսակցական և բարբառային բառերի գրականացում, այդ ճանապարհով նաև՝ դրանց տերմինացում և այլն: Գիտության և տեխնիկայի բուռն զարգացման շրջաններում բառիմաստի տերմինացումը և տերմինակերտումը դառնում են լեզվի բառապաշարի զարգացման և կատարելագործման հիմնական միջոցները:

Բառիմաստի փոփոխությունը բառապաշարի կատարելագործման իրողություններից մեկն է, որ ցույց է տալիս բառային կազմի մեջ տեղի ունեցող ներքին տեղաշար-

ժերը, այսինքն՝ գործառնական ու լեզվաոճական տարբեր շերտերի պատկանող բառերի փոխանցումը մի շերտից մյուսը: Բառիմաստի փոփոխությունը ևս պայմանավորված է ներլեզվական ու արտալեզվական գործոններով: Ներլեզվական գործոններից են բառերի նմանական, կցորդական, գործառնության զուգորդությունները, բառերի քերականական ձևերի մթագնումը, հնչյունային փոփոխությունները և այլն:

Բառիմաստի արտալեզվական փոփոխությունները պայմանավորված են հասարակական-տնտեսական կյանքի, գիտության ու տեխնիկայի, մշակույթի զարգացմամբ ու փոփոխություններով:

Իմաստաբանական փոփոխությամբ բառապաշարի մի մասի տերմինացումը կատարվում է բառիմաստի ընդլայնմամբ և նեղացմամբ: Բառիմաստի փոփոխության երրորդ տեսակը՝ շրջումը, բառերի տերմինացմանը հատուկ չէ. դրան ենթակա են բառապաշարի չեզոք շերտի բառերը:

1. Բառիմաստի ընդլայնումը այն փոփոխությունն է, երբ հասկացության ծավալը մեծանում է, և դրա շնորհիվ բառն ավելի լայն կամ ավելի ընդհանուր իմաստ է ձեռք բերում:

ա) բառը պահպանում է իր հիմնական իմաստը և դրանից զատ այլ իմաստ է ստանում, բ) բառը մթագնում է իր հիմնական իմաստը և գործածվում է նոր, ավելի լայն նշանակությամբ,

գ) բառը հատուկ անունից վերածվում է հասարակ անվան:

2. Բառիմաստի նեղացումը այն փոփոխությունն է, երբ բառը ձեռք է բերում ավելի նեղ, մասնավորված իմաստ:

ա) բառը պահպանում է իր հիմնական իմաստը և դրանից զատ նեղ, մասնավոր իմաստ է արտահայտում,

բ) բառը կորցնում է իր նախնական՝ ավելի լայն իմաստը և ստանում է նեղ, մասնավոր իմաստ, գ) բառը հասարակ անունից վերածվում է հատուկ անվան: Այս վերջին դեպքը բառի տերմինացմանը հատուկ չէ:

Բառերի՝ իբրև մեքենագիտական տերմինների վերաիմաստավորումը ևս կատարվում է բառապաշարի 1. գրաբարյան, 2. արևմտահայերեն, 3. չեզոք կամ առօրյա-կենցաղային, 4. ժողովրդախոսակցական և բարբառային, 5. ժամանակակից զրական լեզվի բառային շերտերից:

Որպես մեքենագիտական տերմիններ են գործածվում նաև այլ գիտաճյուղերի, հիմնականում՝ ֆիզիկայի, ճարտարագիտական գրաֆիկայի և մաթեմատիկայի տերմինները: Մեքենագիտության տերմինաբանակարգը, որ ներառում է մեխանիկայի, մեքենաշինության, մասամբ նաև՝ ավտոմոբիլաշինության, սարքաշինության և մետաղագիտության տերմիններ, նշված գիտությունների տերմինաբանակարգերի հետ կազմում է տերմինային մակրոհամակարգ: Մեքենագիտական տերմինների մի սովորական մասն էլ ընդհանուր է այլ գիտությունների տերմինաբանակարգերի հետ, այսինքն՝ մեկ տերմինով արտահատվում են տարբեր գիտակարգերի տարբեր հասկացություններ: Հանդիպում են նաև տերմինային կրկնակներ՝ զուգածություններ, ինչը անբույլատրելի է:

Բառերի տերմինացումը ժամանակակից հայերենի տերմինների կազմության գործունեղանակներից մեկն է և լայն չափերով կիրառվում է ինչպես գիտության և տեխնիկայի այլ բնագավառների, այնպես էլ մեքենագիտական տերմինների ստեղծման գործընթացում:

Ձեկուցման մեջ վերը քվարկված բոլոր թեզերի համար բերվում և վերլուծվում են մեքենագիտական տերմինների համապատասխան օրինակներ:

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՇԱԿ

Հ. Լալայան

Հայկական չափածո ստեղծագործության ձևավորման և զարգացման պատմության մեջ իր ուրույն տեղն է գրավում քնարերգությունը, որը նախահիմք հանդիսացավ մեր բազմադարյան պոեզիայի համար: Հայ քնարերգությունը ձևավորվել է դեռևս 10-րդ դարից, երբ այն իրենց երգերով հարստացրել և գոհարակերտ բարձունքի են հասցրել

այնպիսի խոշոր քնարերգուներ, ինչպիսիք են Նարեկացին, Ֆրիկը, Երզնկացին, Թլկուրանցին, Մկրտիչ Նաղաշը, Նահապետ Քուչակը, Նաղաշ Հովնաթանը, Սայաթ-Նովան:

Հայ քնարերգության պատմության մեջ իր անփոխարինելի դերն ունի Նահապետ Քուչակը: Նրա կյանքի մասին մեզ շատ քիչ բան է հայտնի: Ապրել և ստեղծագործել է 16-րդ դարում: Այդ են վկայում բանաստեղծի թոռանը պատկանող ձեռագիր Ավետարանի հիշատակարանում 1637թ. գրված հետևյալ տողերը. «Յիշիցեք զՔուչակ եւ զմեծ պապ իւր Նահապետ վարպետն, որ ծանգիտաբուն: Դարծեալ յիշիցեք զՔուչակ եւ զմեծ պապ իւր Նահապետ վարպետն, որ մականունն Աշղղ Քուչակ ասի...»: Նրա ծննդյան ստույգ թվականն անհայտ է, բայց հայտնի է, որ մահացել է 1592 թ. և թաղվել Վանից արևելք գտնվող Արծակ լճի ափին գտնվող հառնակոնիս գյուղում:

Բանասեր Տևկանցը 1882 թ. հրատարակել է «Հայերգ» վերնագրով միջնադարի հայ բանաստեղծների գործերի մի հարուստ ժողովածու, որտեղ առաջին անգամ տպագրվել է 1583 թ. գրված մի ձեռագրից վերցված քառյակների մի մեծ շարք «Յաղագս հոգւոյ եւ սիրոյ ուտանաւոր է բանս» ընդհանուր վերնագրով: Այդ շարքը Տևկանցը վերագրում է Նահապետ Քուչակին, իսկ նույն ժողովածուում տպագրված «Գուգալ մես երեկ տեսայ» տողով սկսվող ուտանավորը Տևկանցը գտնում է, որ թու Քուչակի գործն է: Այդ ստեղծագործության վերջում հեղինակն ասում է.

Ես Քուչակս եմ վանեցի
Ի գեղէն հառակոնիսա,
Լցեր եմ հարիր տարին,
Էլ չի գար մտքիս ի վերայ...

Թոռ Քուչակից մեջ բերված տողերից պետք է եզրակացնել, որ Քուչակի ծննդավայրը եղել է Վանի մոտ գտնվող հառակոնիս գյուղը: Այդ են վկայում նաև մինչև մեր ժամանակները համագյուղացիների մեջ պահպանված գրույցները:

Ն. Քուչակի գերեզմանը դարձել է ուխտատեղի, որտեղ տարիներ շարունակ այցելել են և՛ երիտասարդները, որոնք սիրերգակի տապանաբարի մոտ հավերժ սեր են խոստացել, և՛ ծերերը, որոնք արցունքն աչքերում սպասել են իրենց դարիցի վերադարձին: Ժողովուրդը հավերժացրել է նրա հիշատակը և գերեզմանը ուխտատեղի դարձնելով, և նրա ստեղծագործությունները հավերժ կենդանի պահելով:

Հետաքրքիր ավանդություններ են պահվել Քուչակի մասին: Ըստ այդ ավանդություններից մեկի Քուչակը ծեր տարիքում զբաղվել է երկրագործությամբ: Մի անգամ թուրքական սուլթանի կինը ծանր հիվանդանում է, և նրա ու իր նորածին զավակի կյանքը գտնվում է վտանգի տակ: Իմաստունների խորհրդով սուլթանը հրավիրում է երկրի բոլոր աշուղներին, որոնք իրենց երգով պետք է այնպես հուզեին թագուհուն, որպեսզի նա արտասվեր, որի հետևանքում պետք է բուժվեր կուրծքը: Սակայն ոչ մեկի երգն էլ չի կարողանում հուզել թագուհուն, և սուլթանը ստիպված է լինում որոնել աշուղների իր երկրից դուրս: Երկար որոնելուց հետո հիշում են, որ դեռևս ապրում է վաղուց ի վեր հայտնի աշուղ Նահապետ Քուչակը, որը սուլթանի հրամանով հրավիրվում է պալատ: Քուչակը երգում է իր սրտահույզ երգերը, որոնց շնորհիվ փրկվում են թագուհին և թագաժառանգը: Որպես վարձատրություն, Քուչակը խնդրում է իրեն թույլ տալ 20 օր Ստամբուլում ազատ երգել իր երգերը: Սակայն սուլթանը ցանկանում է էլի որևէ մեծ բանով վարձատրույց լինել այդպիսի ծառայության համար: Երբ սուլթանը շատ է համառում, Քուչակը խնդրում է, որպեսզի մինչև հառակոնիս յոթ կամուրջ կառուցվի գետերի վրա, 7-ական եկեղեցի և մզկիթ շինվեն: Սուլթանը իրականացնում է աշուղի ցանկությունը: Իրը թե հառակոնիսի Ս. Թեոդորոս եկեղեցին այդ եկեղեցիներից վերջինն է:

Մեկ ուրիշ ավանդություն էլ պատմում է, թե իբր Քուչակը մի օր բարձրանում է Ս. Թեոդորոս եկեղեցու գմբեթը և ասում, թե այնտեղ, ուր-կընկնի ինքը, թող լինի իր գերեզմանը: Իբր այդպես էլ կատարվում է, և նրա գերեզմանը գտնվում է եկեղեցու պատի տակ:

Թե ինչպիսի պայմաններում է ապրել և ստեղծագործել, ինչ կրթություն է ստացել Քուչակը, հայտնի չէ: Միայն միանշանակորեն կարելի է ասել, որ նա եղել է գիտության ջատագով և իր քառյակներում բազմիցս գովերգել է գիտությունը:

Նրա սիրո թեմայով գրված քառյակները վկայում են, որ Քուչակը եղել է խիստ առաջադեմ հայացքների տեր անձնավորություն:

Քուչակյան ստեղծագործությունները, որ հիմնականում քառյակներ են, ձեռագրերում սովորաբար կոչվում են հայրեններ: Մինչև մեր օրերն էլ այդ անունով են ընդունվել և ճանաչվել նրա երգերը:

ՆԻԿՈՒ ԱՂԲԱԼՅԱՆԸ՝ ԲՆՆԱԴԱՏ

Ա. Պետրոսյան

Գրական առաջին իսկ փորձերով Նիկո Աղբալյանը իր վրա է սևեռում կովկասահայ գրական աշխարհի ուշադրությունը: Այդ ճանաչումն ուներ իր նախապատմությունը՝ ձևավորված դեռևս Ներսիսյան և Գևորգյան ճեմարաններում, ուր ապագա մտավորականն ու գիտնականը գրականության, լեզվաբանության, պատմության հարցերի շուրջ իր ունեցած յուրօրինակ պատկերացումների շնորհիվ ակամա դարձել էր հանրության հետաքրքրությունների առարկան:

Գրական մուտքը սկսվում է Ա. Արեսխանյանի «Մուրճում»: Վերջինս ունենալով հատուկ ու կանխակալ ծրագիր գրական, հասարակական, քաղաքական կյանքը նոր, ազատական դիրքորոշումներից մեկնաբանելու, իր շուրջն էր հավաքել Կովկասի առաջադեմ մտավորականներին, որոնց շրջանում նաև Աղբալյանին:

«Մուրճի» գրական բաժինը դառնում է այն հնոցը, ուր խմորվում են Աղբալյանի գեղագիտական, աշխարհայացքային, գաղափարական պատկերացումները արվեստի, գրականության խնդիրների, նրանց ունեցած հասարակական պարտավորությունների, գեղարվեստական մարմնավորման այլազան ուղիների որոնման և դրսևորման ձևերի շուրջ:

Ստեղծագործական այս շրջանում դեռևս երիտասարդ գրողներ Հանթը, Թումանյանը, Իսահակյանը անմիջականորեն գրավում են Աղբալյան գեղագետի միտքը: Արևելահայ իրականության մեջ վերջինների գրական ճանապարհի հարթողի դերը գլխավորապես վերապահվում է Աղբալյանին: Հետագայում գրողների այս շարքին ավելանում են Դ. Դեմիրճյանի, Վ. Տերյանի, Ա. Սուրյանի, Ե. Չարենցի, Գ. Հակոբյանի անունները:

Աղբալյանը, սակայն, չի սահմանափակվում միայն տաղանդավոր ու հանճարեղ անհատականությունների հայտնաբերմամբ ու նրանց ստեղծագործությունների մեկնաբանմամբ: Շատ ավելի լայն ու համապարփակ էին նրա հետաքրքրությունները այս բնագավառում՝ համախմբել, դաստիարակել, գնահատել արևելահայ ու արևմտահայ գրական ստեղծագործությունները, ստեղծել համընդհանուր մի գրական շրջան, որը պիտի եփվեր ու տրոփեր միևնույն ազգակներով, բայց և ունենար արտահայտման ու դրսևորման անձնատարբեր ձևեր ու ուղղություններ: Այդ է պատճառը, որ «Մուրճի» 1906-ից մինչև 1907թթ.-ի համարներում մենք հանդիպում ենք գրական տարասեռ ճաշակ ու հակումներ ունեցող գրողների երկերի մանրագծին ու անկաշառ քննության բազմաթիվ դեպքերի:

1905-1907 թթ.-ի ռեակցիայի տարիներին Աղբալյանը մեծ մասամբ հանդես է գալիս «Գեղարվեստի աշխարհում» բաժնում ինքնությունը բաքցնող «Ա» ստորագրությամբ: Այս ստորագրությամբ հեղինակին է հայ ժողովուրդը պարտական Հ. Թումանյանի «Անուշի» անկրկնելի վերլուծության ու քննության համար, որ, ցավոք, մինչ այսօր տեղ չի գտել ոչ մեծանուն քննադատի երկերում, ոչ էլ հայ քննադատության պատմության որևէ ժողովածուում:

«Մուրճից» հետո Աղբալյանը գրական, քննադատական հոդվածներով հանդես է գալիս Թիֆլիսի «Նոր հոսանք», «Հորիզոն», Բաքվի «Գործ», Երևանի «Յատաջ», «Ազատամարտ», «Հայաստանի աշխատավոր» և այլ պարբերականներում: Անմասն չի մնում արևմտահայ գրական խնդիրներից, պարբերաբար մասնակցում է Պոլսի «Գրական ասուլիսներին», տալիս հետաքրքիր ու դիպուկ մեկնաբանություններ Սիամանթոյի, Վարուժանի, Չարդարյանի և այլոց ստեղծագործություններին:

Ժամանակագրական առումով Աղբալյանի գրաքննադատական գործունեության շրջանը հիմնականում ընդգրկում է կովկասյան ժամանակահատվածը՝ մինչև 1921 թ.-ի փետրվարյան դեպքերը: Սկիզբն էր մեծ հայն ու մտավորականը իր սահմանափակ ժամանակը տրամադրել է գիտական հոդվածներին՝ հանդես գալով «Յուսաբեր», «Հայրենիք», «Ակոս», «Հանդես ամսօրյա», «Բազմավեպ», «Սիոն», «Արարատ» և այլ հայագիտական պարբերականներում:

ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՔԻ ԽՆԴԻՐԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մ. Չայրայետյան

Մշակույթի (լատ. cultura – մշակում, դաստիարակում, կրթություն) բազմաթիվ ու հաճախ իրարանման դասակարգմամբ հանդերձ հետազոտողները միակարծիք են, որ այն անհատի և հասարակության զարգացման մասին համարձակ է դասակարգման ձևերից հատկապես ընդունված են ժամանակայինը (ասենք հնադարյան, միջնադարյան, 19-րդ դարի մշակույթ և այլն), ազգայինը (ասենք հայ, պարսից, ֆրանսիական մշակույթ և այլն), գաղափարախոսական-փիլիսոփայականը (ասենք կաթոլիկական, իսլամական, պրոգրեսիվիստական, ավանգարդիստական մշակույթ և այլն): Ինչպես ժամանակային, այնպես էլ ազգային և գաղափարախոսական-փիլիսոփայական բաժանումներն իրենց ներսում հատակ առանձնանալ չեն կարող. նրանց միջև սահմանները խիստ պայմանական են և սորուն, դիֆուզիոնիզմն առկա է էվոլյուցիոնիզմի գուգահեռ:

Քաղաքակրթությունների (ֆր. civil – 1) քաղաքացիական, 2) կիրթ) և ենթաքաղաքակրթությունների (subcivilisation) սահմանումներն ու դասակարգումները ևս բազմաթիվ են և բազմազան, ինչպես մշակույթներին ու ենթամշակույթներին: Այստեղի ընդհանուրն այն է, որ քաղաքակրթությունը պարտադիր ենթադրում է համակարգայնություն: Մշակույթը և քաղաքակրթությունն էլ իրենց հերթին ունեն շփման ընդհանուր մեծ տիրույթ, անկյունաքարային նույնություններ ու նմանություններ: Հազարավոր են մշակույթները, սակայն ընդամենը 1-2 տասնյակ են մեռած ու ողջ հայտնի քաղաքակրթությունները, մի փոքր ավելի ենթաքաղաքակրթությունները:

Հայ մշակույթն ունենալով յուրահատուկ տրամաբանություն մշտապես եղել է քաղաքակրթական տարբեր համակարգերի անմիջական և միջնորդավորված ազդեցությունների ոլորտում (հիմնականում շումերա-աքքադական, հնդ-իրանական, հելլենիստական, հրեական, արևմտյան, գլոբալ): Սակայն հայ մշակույթի յուրօրինակությունը երբեք չի վերածել համակարգված քաղաքակրթության, ինչպես, ասենք, չինական փակ-քարացած քաղաքակրթությունը:

Գրականությունը, լինելով հոգևոր մշակույթի ամենավառ արտահայտիչներից, իր վրա է կրել մշակութաբանական և քաղաքակրթական տարբեր հոսանքների և շերտերի ազդեցությունը: Ստեպ-ստեպ հայ իրականության մեջ դրսևորված այդ հակամարտություններն արտահայտվել են նաև գրականության մեջ (օրինակ Խորենացին, լինելով հելլենիզմի ցատագովը, հայածվել է ասորական և պարսից ուղղվածության գործիչներից, ինքն էլ իր «Հայոց պատմության» մեջ բազմիցս քամահարանքով է խոսել պարսից հոգևոր ժառանգության և ասորի ուսյալների մասին, ինչի աշխարհայացքային կողմը նրա ամբողջ ժառանգությունն է): Նույն է պարագան Մ. Նալբանդյանի և Գ. Այվազովսկու, «Մշակի» և «Մեղվի», Վ. Տերյանի և ավագ սերնդի շատ գրողների, այսօրվա նեոլիբերալների և ավանդապահների դեպքում:

Ենթաքաղաքակրթական և ներենթաքաղաքակրթական օրինաչափ վերելքները, հակասություններն ու ճգնաժամերը հայ իրականության (նաև գրականության) մեջ արտահայտվել են ազգային վերելքների, հակասությունների ու ճգնաժամերի ավտորշոկային տեսքով: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին պոլսահայ գրականության մեհենականացումը կամ նմանատիպ մտայնությունների արտահայտումը Թումանյանի, Իսահակյանի, Տերյանի (թեև այլ հանգամանքների առիթով Տերյանն ասել էր. «Թումանյանի մի «Փարվանան» ես չեմ փոխի պոլսահայ բոլոր հանկարծակի հեթանոսացած պոետների արտադրությանց հետս»), Չարենցի և այլոց երկերում ու անհատական գործունեության մեջ ինքնաբերական երևույթ էր այն համաեվրոպական փիլիսոփայական մտքի, քաղաքական զարգացումների, գիտական նվաճումների, սոցիալական խնդրումների և այլ բաղադրիչների հայկականացված ընկալումն էր: Ետպատերազմյան համաշխարհային մտքի նույն հայկականացված ընկալումն էր Օ. Չիֆթե-Սարաֆի, Ը. Շահնուրի և սփյուռքային նշանավորների գեղարվեստը, ինչպես որ խորհրդային տարածքում զարգացող մեր գրականությունն էր մեկ ընդհանուր մտայնության ծիրում և ազդեցության ոլորտում:

Քաղաքակրթական ընտրանքի խնդիրը մշտապես եղել է և կա հայ իրականության, հետևաբար և առաջին հերթին մշակույթի առջև, որին երբևէ վերջնական լուծում չի տրվել:

Ընտրանքի օբյեկտների տարբերությամբ է միայն հնարավոր բացատրել տաղանդով միմյանց չզիջող և նույն էթնո-սոցիալական միջավայրում ստեղծագործած, ասենք, երգահաններ Ա. Տերտերյանի և Է. Հովհաննիսյանի, նկարիչներ Սիմասի և Գ. Նալբանդյանի, կինոռեժիսորներ Զ. Մալյանի և Է. Քեոսյանի, բանաստեղծներ Շիրազի և Սևակի, արձակագիրներ Զ. Մաքևոսյանի և Մ. Գալչոյանի նույն «հայ մշակույթի, բայց տարբեր քաղաքակրթական համակարգերի ներկայացուցիչներ լինելը:

ՀԱՅԱՐՄԱՏ ԿՐԿՆԱՎՈՐ ԲԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՊԱՆՈՒԵՐԵՆ (ՁԱՏԿԻ ԿՂԶԻ) ԼԵՉՈՒՄ

Լ. Ստեփանյան

Ուսանողները պատկանում է ավստրոնեգիական (մալայա-պոլինեզիական) լեզվաընտանիքի պոլինեզիական ցեղախմբին: Պոլինեզիական ցեղախմբից բացի, ավստրոնեգիական լեզվաընտանիքի մեջ մտնում են մելանեզիական, միկրոնեզիական, ինդոնեզիական ցեղախմբերը: Ուսանողներն Ձատկի կղզու բնիկների լեզուն է կղզի, որը պոլինեզիական «եռանկյունում» հարավարևելյան գագաթն է: Ուսանողներն չափազանց մերձակից է թաիթերեն, տուամուտու, մանգարևա, րարոտոնգա, հավայերեն, մարթիզերեն և այլ պոլինեզիական լեզուներին:

Մեր հետազոտությունները ցույց են տվել, որ ռապանուերներում (իմա պոլինեզիական լեզուներում) առկա է հայկական (ինդեվրոպական) չափազանց արխայիկ մի ենթաշերտ, որն ընդգրկում է համարյա բոլոր իմաստային (թեմատիկ) խմբերը, և որի մեջ զգալի թիվ են կազմում հայաբնույթ կրկնավոր բարդությունները:

Կրկնությունը բառակազմական հնագույն միջոց է, որ հատուկ է եղել բոլոր հին լեզուներին: Բառարմատի կրկնությամբ խոր անցյալում կազմվում էր գոյականի հոգնակի թիվը, հաղորդվում էին իմաստի սաստկացման, ընդգծման, գործողության երկարատևության և այլ գաղափարներ:

Ուսանողներն լեզվի բառակազմական հիմնական միջոցները երկուսն են. նախածանցումը և բառարմատի կրկնությունը (վերջածանցումը ռապանուերներում թույլ է զարգացած):

Հետազոտությունները ցույց են տվել, որ արմատի կրկնությունը ռապանուերների ամենակենսունակ բառակազմական միջոցն է լեզվի զարգացման տարբեր փուլերին վերաբերող տեքստերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ժամանակակից ռապանուերներում և ավելի ուշ բանահյուսական տեքստերում հանդիպում են կրկնավոր բարդությունների ավելի շատ տեսակներ, քան ռոնգո-ռոգոյի և ավելի վաղ բանահյուսական տեքստերում: Այսպիսով, ռապանուերները նշանակալիորեն հարստացել է կրկնավոր բառերի հաշվին:

Ուսանողներն լեզվի բնորոշ գծերից է նաև կրկնավոր բարդությունների հաճախակի կիրառությունը խոսքում. տարբեր ձեռագրերում դրանց կիրառման միջին հաճախականությունը հասնում է 14%-ի:

Այս ամենով հանդերձ, ռապանուերների կրկնավոր բարդությունները գիտական գրականության մեջ բավարար չափով չեն ուսումնասիրվել: Ուսանողներն լեզվի քերականությունը գրել են երկու հեղինակներ Ս. Էնգլերտը և Ֆուենտեսը, որոնցից առաջինն իր գրքում ընդհանրապես չի անդրադարձել կրկնավոր բարդություններին, իսկ երկրորդը սահմանափակվել է միայն արմատի անհնչյունափոխ կրկնության դեպքերով: Ինչ-որ չափով այդ հարցին անդրադարձել է ռապանուերների մեկ այլ մասնագետ Ի. Կ. Ֆրոդորովան, որի կարծիքով, անհնչյունափոխ կրկնավոր բարդությունները ռապանուերներում ձևավորվել են մարթիզերենի և այլ պոլինեզիական լեզուների ազդեցությամբ հետևանքով:

Մեր հետազոտությունները ցույց են տվել, որ ռապանուերների կրկնավոր բարդությունների մեջ չափազանց մեծ թիվ են կազմում հայաբնույթ կրկնավոր բարդությունները: Ուսանողներն ունեն, ինչպես հայերենում, արմատը կարող է կրկնվել լրիվ (առանց հնչյունափոխության) և մասնակի (հնչյունափոխված): Լրիվ (անհնչյունափոխ) կրկնությունը հատուկ է գոյականներին, ածականներին և բայերին, իսկ մասնակի (հնչյունափոխված) կրկնությունը նաև դերանուններին ու բովանանքներին: Ինչպես հայերենում, ռապանուերներում ևս հնչյունափոխվել կարող են թե առաջին, թե երկրորդ բաղադրիչները:

Ուսումնասիրության առումով առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում ռապանուերենի բայական կրկնավորները: հայերենի բայական կցական կրկնավորների մեջ Ա Արբախանյանը տարբերակում է երկու շերտ՝ հին և նոր, հին շերտի մեջ մտցնելով այն կրկնավոր բարդությունները, որոնք ժամանակակից հայերենում պահպանվել են միայն կրկնավոր ձևերով:

Չետագոտությունների արդյունքում պարզվել է, որ ռապանուերենի հայարմատ կրկնավոր բարդությունների մեջ առկա են այնպիսի բառեր, որոնք Ա Արբախանյանը դասում է հին կամ գրաբարից ավանդված շերտին:

Մեր կարծիքով, դա ապացուցում է վերջիններիս արխայի բնույթը և, այդպիսով, հայկական արխայի ենթաշերտի գոյությունը ռապանուերենում, ուրեմն և՛ պոլիենգիական լեզուներում:

ԻՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՂԵԱԸ ՐԱՖՖՅՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒՍԱՆՏԻՉՄԻ ՀԱՄԱՎԱՐԳՈՒՄ Գ Վարդանյան

Րաֆֆու ստեղծագործության մեջ գործում են ռոմանտիկական մեթոդի բոլոր հիմնական օրենքները, որոնցից ամենագլխավորի՝ իրականության և իղեալի սուր հակադրության ու բեռնացման պարտադրմամբ սոցիալական տիպերը ներկայանում են իբրև մարդկային բնավորության միայն բացասական գծերի կուտակումներ, առևտրավաճառական բուրժուազիայի գիշատիչ էության խտացված արտահայտություններ:

Վիպասանի սոցիալական երկերում և, ընդհանրապես, ողջ ստեղծագործության տիպականացման արվեստում բացակայում է «ուկե» միջինը: Եթե տվյալ կերպարն ընդհանրացնում է վաշխառուի տիպը, ուրեմն նա անվերապահորեն պետք է լինի բացասական և արժանանա ընթերցողի ատելությանը թե՛ գործով և վարքուբարքով, թե՛ քստմենելի էությանը համապատասխանող տգեղ արտաքինով: Ճանճուր Իվանիչին, Պետրոս Մասիսյանին, Աղա-Պարոնովին և մյուս դժնետեսիլ հերոսներին «արժանի» տեղ հատկացնելով սոցիալական տիպերի «պատկերասրահում» և «մռայլ դասակարգի» գեղարվեստական համապատկերը նպատակաբանելով ռոմանտիկական իղեալի տեսանկյունից՝ Րաֆֆին գույներ չի խնայում՝ նշավակելու, ծաղկելու, վարկաբեկելու յուրաքանչյուրին, մերկացնելու շահասիրության այդ «ծեր որսորդների» անձնական արատները, բարոյական աղտը, բիրտ գռեհկությունն ու անասնական-բնագոյային եսանդությունը: Հեղինակը համառ հետևողականությամբ ցուցադրում, առավել ցայտուն է դարձնում իրական բոլոր այլանդակությունները, որպեսզի այդ դասակարգի գլխավոր «գործող անձանց» սպասող անհեռանկար գալիքի կանխատեսումով հավաստիացնի հնի կործանման անհրաժեշտ անխուսափելիությունը:

Մռայլ իրականության համատարած գորշությանը հակադրելով իղեալականի գեղեցկությունը՝ վիպասանը միանգամայն հակառակ վերաբերմունքն է ցուցաբերում իղեալական գաղափարատիպերի հանդեպ, որոնք ռոմանտիկական հիմնարար սկզբունքի դրական բեռն են: Այս հերոսների հոգեկան անթերի կերտվածքին և անբիծ առաքինություններին լիովին ներդաշնակվում են և նրանց արտաքին բարենամությունները, որոնք ձևակերպվում են իրականության ու իղեալի հակադրությունը սրող և ռոմանտիկական գաղափարադրույթը հաստատող մի այլ «ստանդարտով»: Դա, անշուշտ, ինքնանպատակ չէ ընթերցողը պետք է համակրի, հավատա նրանց, համոզվի, որ առաջավոր գաղափարների այդ ցածրակարգի ընդունակ են բարեփոխելու հասարակական կյանքը, ազգային առաջադիմությունը կողմնորոշելու դեպի կարծեցյալ ճշմարիտ ուղին և մարգարեաբար կանխատեսելու ապագան: Բացի իղեալական հերոսներին տրված բարենորոգչական «հանձնարարականից» հեղինակը ցանկանում է նրանց օրինակով ընթերցողի մտքին հաղորդել ազգային շահերի ըմբռնման լայնախոհություն, կամքին՝ այդ շահերը պաշտպանելու պատրաստակամություն, սրտին ու հոգուն՝ այնպիսի զգացումներ, որոնց անաղարտ մաքրությունը սրբագործվի անձնական սիրո և հայրենասիրության երանելի ներդաշնակությամբ:

Իղեալի առաջադրումը Րաֆֆու սոցիալական ռոմանտիզմի համակարգում սերտորեն միախուսվում է հեղինակային անթաքույց սուբյեկտիվության հետ: Վիպասանի շեշտված միտումնավորությունը, կողմնակալ միջամտությունն ու հուշարարությունը և հուշած միտքը ընթերցողին պարտադրելը նրա դավանած մեթոդի անկապտելի առանձնահատկություններն են և գաղափարադրույթի հաստատման անհրաժեշտ պայմանները: Այստեղ գործում է ոչ թե երկի բուն բովանդակության և կերպարների գարգացման տրամաբանությունը, այլ հեղինակի սուբյեկտիվությամբ պարտադրված միտումը, որը յուրօրինակ պահպանի պես ուղեկցում է հերոսներին և կանխորոշում նրանց գործողությունները: Գրողը, որպես կանոն, առաջին պլան է մղում ռոմանտիկական իղեալը, որը, արտահայտելով հեղինակի սուբյեկտիվ ցանկությունն ու պատրանքը և հիմք չունենալով իրական կյանքում, սնունդ է առնում հասարակության զարգացումն ու ազգային համակողմանի առաջընթացը խթանելու նրա ազնիվ երազանքից: Հասկանալի է, որ տգեղ իրականի և գեղեցիկ իղեալականի ծայրահեղ սուր հակադրության իր գեղագիտական հայեցակարգում վիպասանը երկրորդին է վերապահում հեղինակային համակարգի ամբողջ մենաշնորհը:

Րաֆֆու սոցիալական ռոմանտիզմն անցել է արգագաման երկու հիմնական փուլեր: Լուսավորական ռոմանտիզմը, որով նշանավորվեց վիպասանի մուտքը գրական ասպարեզ, պետք է լուծեր ազգի լուսավորության և քաղաքակրթության խնդիրը, առանց որի անհնար էր ազգային առաջընթացը: 70-ական թթ.-ին նրա ստեղծագործության մեջ ներմուծվեց նաև տնտեսական ուտոպիան, որը կրում էր եվրոպական երկրներում զարգացող տնտեսագիտական մտքի, մասնավորապես տնտեսական դետերմինիզմի զգալի նվաճումների ազդեցությունը: Հասարակության սոցիալական բարենորոգումների ռաֆֆիական պատրանքն այս փուլում արդեն հիմնվում է առևտրի «արդար շահասիրության» ռոմանտիկական տեսության վրա: Անմիջապես արձագանքելով հասարակական մտքում խնդրվող առաջադիմական գաղափարներին՝ գրողը «Մինը այսպես, մյուսը այնպես» և «Ոսկի աքաղաղ» վեպերում կերտեց առևտրի եվրոպական առաջավոր «գիտական» եղանակները կիրառող գաղափարատիպեր (Ուրբեն Արուսյան, Քաջբերունի, Միքայել) և նրանց շնորհից հասարակությունը բարեփոխելու, կյանքում արդարություն հաստատելու, մարդկային կատարյալ ու ներդաշնակ համակցության նվիրական երազանքների իրականացմանը ձեռնամուխ լինելու արտոնությունն ու պատիվը, համակցություն, որի ամենամեծ ձեռքբերումը պետք է լիներ մարդկանց գիտակցական վերաբերմունքը դեպի աշխատանքն ու սեփականությունը, դեպի նյութական բարիքների ստեղծումն ու բաշխումը, իսկ վերջնական, գերագույն նվաճումը՝ մարդու լիակատար ազատությունը:

Վերջապես, ռոմանտիկական համակարգը Րաֆֆու սոցիալական երկերում ամբողջանում է իրական-այլանդակի քննադատության բարոյագեղագիտական բնույթով, որը, առհասարակ, ռոմանտիզմի ստեղծագործական «շաղախն» է: Վիպասանի սոցիալական ուտոպիան դիմում է քննադատության այդ միջոցին կյանքի ժանտ մոայությանը հակադրելով իղեալական համակցության լույսը, կապիտալի կուտակման կրքերին՝ «արդար շահասիրությունը», խաբեությանը՝ ազնվությունը, գայլային օրենքներին՝ անկեղծ բարեկամությունը, ստորին՝ վսեմը...

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՈՒՊԱՇԱՐԸ, ԲԱՈՒՊԱՇԱՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԱՈՒՆՁՆԱԿՆԱՏ-ԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱՎՈՐ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ԽՈՒՔՈՒՄ ՀԱՐՍԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ Լ Հովհաննիսյան /Գյումրի/

Լեզուն ոչ միայն ուսումնական առարկա է, այլև գիտելիքների հաղորդման և ուսուցման միջոց:

Այն հնարավորություն է ընձեռում մարդուն ոչ միայն դիտել և ճանաչել բնական, հասարակական երևույթները, կատարել եզրահանգումներ, կամ էլ բավարարվել այս կամ այն բերականական օրինաչափությունները սերտելով, այլև ստացած գիտելիքներով կարողանալ կատարել ընդհանրացումներ, քերականական այս կամ այն կպնոնի սահման

նունը ճիշտ ընկալել և կիրառել գործնականում սովորած բառերը, բառակապակցությունները, դարձվածքները, որոնք մեր ժողովրդի հոգևոր գանձերն են, տեղին և ճիշտ օգտագործել թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքում: «Հայերենի բառապաշարը, զարգացման և հարստացման ձևերն ու եղանակները» թեմայի ուսուցումը բուհում լեզվի կարևորագույն, առանցքային, ամենից շատ օգտագործվող բաժիններից մեկն է:

Մարդն անընդհատ հաղորդակցվում է շրջապատի հետ, իր մտքերն արտահայտում նախադասությունների միջոցով, իսկ առարկաների և երևույթների անվանումները բառերի միջոցով:

Բառերը շինանյութ են համարվում մարդու համար մտքերը ճիշտ և գեղեցիկ արտահայտելու և շարադրելու: Ինչքան բառերի ընտրության հնարավորությունը մեծ է լինում, այնքան հարուստ է բառապաշարը, խոսքը ճկուն ու գեղեցիկ:

Ահա, ինչ խոսք, այն՝ թեման ուսուցանելիս ուսանողներին այնպիսի մեթոդական ձևերով ու եղանակներով պիտի մատուցվի, և այն պետք է վերածվի այնպիսի հմտության, որ ուսանողը հանգամանորեն յուրացնի բառապաշարի օրինաչափ երևույթները, գործնական խոսք կառուցելու ձևերն ու միջոցները:

Անհրաժեշտ է ծանոթացնել հայերենի հարուստ բառազանձին: Մեր բառապաշարը հարուստ ու ճոխ է, և այն անընդհատ իր զարգացման ընթացքում փոփոխություններ է կրում, գործածությունից դուրս են մնում բառեր: Կենդանություն են ստանում և կյանք մտնում նախկինում հնարաբանություններ համարվող որոշ բառեր (նախարար, սպարապետ, Ամանոր): Գիտության և տեխնիկայի զարգացմանը զուգընթաց բառապաշար են ներգործում մասնագիտական նոր բառեր և տերմիններ:

Տեսականը գործնականի հետ կապելու, ուսանողի մեջ հմտություններ զարգացնելու համար հարկավոր է նաև ուշադրություն դարձնել գրական երկի լեզվական պատկերավորման և արտահայտչական միջոցների, հնարանությունների, ժողովրդական հյութեղ արտահայտությունների, նորաբանությունների, կիրառական ոլորտի առանձնահատկությունների վրա:

Օգտվել բառապաշարից, նրանց ոճական հնարավորությունից, նշանակում է ճիշտ ընկալել ու օգտագործել խոսքում տվյալ բառը:

Ուստի ուսանողը պիտի իրազեկ լինի, որ կան նաև բառեր, բառախմբեր, որոնք որևէ սկզբունքով սահմանափակ գործածություն ունեն (տերմիններ, մասնագիտական բառեր, հնարանություններ, օտարաբանություններ), որոնք չի կարելի օգտագործել որևէ գեղարվեստական խոսք կառուցելիս:

Երբեմն էլ հարկ է լինում խոսքին ինչ-որ վերամբարձ հանդիսավորության ոճ հաղորդել, այդ պարագայում սովորական բառերն ու բառակապակցությունները չի կարելի օգտագործել, այն պիտի օգտագործել՝ օգտվելով անցյալի բառերի հարստությունից: Օրինակ՝ ընտանիքի հետ միասին – ընտանյոք հանդերձ, ոտքի վրա կանգնած – հոտնկայս: Խոսքին ոճական հանդիսավորություն տալու համար նախընտրելի է գործածել ընտանյոք հանդերձ, հոտնկայս ձևերը:

Ինչպես տեսնում ենք, հայերենի բառապաշարի հարստացման գործոններն ու հնարավորությունները շատ են, բայց ցավով պիտի ասել, որ այսօրվա մեր ուսանողի բառապաշարը խիստ աղքատիկ է, խոսքի կուլտուրան՝ ցածր:

Դասերին հաճախ ուսանողը դրսևորում է կցկտուր մտքեր, չի օգտագործում գեղեցիկ բառեր ու դարձվածքներ: Անգամ շարադրություններ գրելիս զգացվում է ուսանողի բառապաշարի խեղճ ու աղքատ լինելը:

Ուրեմն՝ այս թեմայի ուսուցման նպատակը չպիտի լինի այն, որ ուսանողը ծանոթ լինի միայն բառապաշարին, այլ կարողանա օգտվել դրանից, ինքնուրույն և գեղեցիկ խոսք կառուցել թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքում:

Բառապաշարի հարստացման աշխատանքներն արդյունավետ դարձնելու համար առաջարկում են ուսուցման մի քանի ձևեր՝ ա. մասնագիտական և գեղարվեստական գրականության խորամուխ ընթերցում. բ. անծանոթ բառերի, բառակապակցությունների, դարձվածքների դուրսգրում և բառարանների միջոցով այդ բառերի իմաստների հստակեցում:

գ. անծնական բառարանի ստեղծում՝ դուրս գրելով անծանոթ բառեր, դուր եկած դարձվածքներ:

դ. մասնագիտական տեքստերից տվյալ խոսքի մասին (գոյական, ածական, դերանուն և այլն) պատկանող բառերի դուրսգրում, բառակապակցությունների կազմում և դրանց գործածությունը նախադասության մեջ:

ե. բառարանների օգտագործում՝ բացատրական, հոմանիշների, դարձվածքների և այլ տեսակի բառարաններ:

զ. իրազեկ լինել ժամանակակից մամուլին (թերթերում, ամսագրերում լույս տեսնող բլոգակցություններ ու հոդվածներ), հեռուստատեսային հաղորդումներին:

ԲԱՌԱՅԻՆ ՀՈՍԱՆԻՇՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՃ

Շ. Բարսեղյան

/Գյումրի/

Հայերենի գիտական տերմինաբանության որոշումներում առանձնակի տեղ են գրավում ճարտարագիտական տերմինաբանության հարցերը: Շարունակելով անցյալի տեխնիկական բուհի մասնագիտական տերմինաբանության լավագույն ավանդները՝ ժամանակակից տերմինաբանությունը շարունակում է իր ուսումնասիրությունները արդի տերմինաբանության հայացման և զուգահեռ ձևերի միասնականացման գործում:

Մեխանիկական, շինարարական հոսքերում հաճախ են օգտագործվում ռուսերենից փոխառնված մասնագիտական տերմինները: Եվ որպեսզի ուսուցումն ավելի արդյունավետ լինի, իմ կարծիքով, ճարտարագիտական բուհի ուսանողների համար «Ուս հայերեն» բացատրական բառարանից բացի, խիստ անհրաժեշտ են մասնագիտական նորացված տերմինների բառարանները:

Խոսելով մասնագիտական տերմինների, հայերենում գործածվող զուգահեռ ձևերի միասնականացման և ճշգրտման մասին՝ պիտի նշել, որ այս գործում պիտի խոսք գնա մասնագիտական տերմինների հոմանիշության մասին: Այսինքն՝ մի հայերեն մասնագիտական տերմինը կարող է ունենալ մեկից ավելի հոմանիշ տերմիններ և արտահայտի տվյալ մասնագիտական տերմինի ճշգրիտ հասկացությունը: Բերենք ասվածի վերաբերյալ հավաստող օրինակներ՝

- холодная обработка металла - մետաղի սառը մշակում կամ սառնամշակում
- подвижный - շարժական, շարժուն, նաև շարժունակ
- поток - հոսք, հոսանք կամ հոսքնթաց
- поточный - (ռուս. նաև կոնվեյերային) – հոսքային, հոսքնթացային
- плавка - հալում, հալվածք, նաև հալք
- сварка - ծուկույթ, ծուկվածք, զոդում, նաև լցույթ
- ресурс - պաշար, միջոց նաև ռեսուրս
- устройство - սարք, հարմարանք, նաև սարքվածք
- изыскание - հետազոտություն, նաև հետազննություն
- операции - գործողություն, գործառնություն նաև գործույթ
- изделие - արտադրանք, շինվածք, նաև կերտվածք
- полярввка - ողորկում, փայլեցում, հղկում, նաև կոկում
- шлифовка - հղկում, կոկում, ողորկում
- заполнитель - լցանյութ, նաև լցիչ լցափողիչ
- наполнитель - նույնը տես заполнитель

Ասելիքս ամբողջացնելու համար կուզենայի նշել, որ նման բառային հոմանիշներով մասնագիտական տերմինների բառարանը չափազանց կարևոր է ապագա շինարարի, մեխանիկի կամ տնտեսագետի համար:

АНАЛИЗ КОНСТРУКЦИЙ НАУЧНО-ТЕХНИЧЕСКОЙ РЕЧИ С УПОТРЕБЛЕНИЕМ ОТГЛАГОЛЬНЫХ СУЩЕСТВИТЕЛЬНЫХ ПРИ ВЫРАЖЕНИИ РАЗЛИЧНЫХ СМЫСЛОВЫХ ОТНОШЕНИЙ

М. Тер—Оганесян

Особую актуальность в совершенствовании методики преподавания русского языка в неязыковом вузе приобретает выбор методов, позволяющий добиться наибольшей эффективности обучения русскому языку студентов-армян, а также вопрос о практическом овладении русским языком в высших учебных заведениях с учетом специальности студентов.

В связи с этим особое место в общей системе обучения русскому языку в вузе отводится работе над специальным текстом.

Обучение языку специальности по своему характеру является целенаправленным, то есть не с ориентацией на научный язык вообще, а с учетом языка конкретной специальности. Целенаправленный характер обучения научной речи проявляется в отборе речевого материала в составлении спецтекстов и в работе над конструкциями по научному стилю речи на материале специально отобранных текстов.

В рамках рассматриваемой методической организации текстового материала по русскому языку при обучении основам научной речи нами выделены разные типы речевой ситуации. Студенты должны знать, что для оформления на русском языке определения научного понятия (дефиниции) они могут построить высказывание из следующих структурно-семантических схем с определенным лексическим наполнением: что это что, что есть что, что называется чем, что называют чем и т. д.

На базе вышеприведенных конструкций используются и другие конструкции, и на протяжении обучения следует добиваться того, чтобы студенты усвоили противопоставление двух конструкций: 1) глагол + винительный падеж прямого объекта, 2) отглагольное существительное + родительный падеж прямого объекта.

РАБОТА С ОТГЛАГОЛЬНЫМИ СУЩЕСТВИТЕЛЬНЫМИ ПРИ ИЗУЧЕНИИ СПЕЦИАЛЬНОЙ ЛЕКСИКИ

А. Егиян

